կեղեցիս և զկրօնաւորս և զայլս՝ որք բնակին անդ, զի մի հարստահարեալ նեղեսցեն զնոսա, այլ կացցեն և մնասցեն ի յարգանս և ի մեծարանս, որպէս էին յառաջագոյն, նորոգել զաւերեալ եկեղեցիս առանց այլայլելոյ զառաջին դիրս, և չտալ թոյլ ումեք առանց հրամանի առնել նորահնար իրս՝ որ ոչ էր ի բնէ։ Եւ վանքն Ս. Յակոբայ, որոյ տիրեալ են Հայք, սեփհականութիւնէ ազգին Վրաց։ Եւ Լատինք չինեալ են նոր խորան ի վիճակին Վրաց ի Ս. Յարութեան, և պատարագեն անդ։ Արդ՝ խնդրեմք առնուլ զվանս Ս. Յակոբայ ի ձեռաց Հայոց և տալ Վրաց. կործանել զնոր սեղանն զոր հնարեալ են Լատինք յեկեղեցւոջ յայնմիկ։ Սուլթանն յարգանօք ընկալաւ զդեսպանն և զնամակ թագաւորին Վրաց, և դրեաց հրովարտակ առ մեծ նախարարն եւ փոխանորդն իւր, որոյ անունն էր Սեֆֆէ Եոոոֆ էլ Աշրաֆֆ։ Իմաստ հրովարտակին՝ յետ յարգական ողջունի և կարդալոյ զանուն դիմածին և ողորմածին Աստուծոյ, և մահապրութեանն՝ ասէ. «եկն ի դուռս մեր Վսեմ Դեսպանն փառաւոր արքային Վրաց, և եգիտ պատիւս և մեծարանս յարքունիս մեր, և մատոյց զնամակ թագաւորին իւրոյ, յորում հայցեր զչնորհս ի դիմութենէ մերմէ սակս խնդրոյ ինչ։ Ահա դրեցի առ մեծութիւն ձեր՝ ելանել անձամբ ի քննութիւն վանացն Ս. Յակոբայ, եւ սեղանոյն Լատինաց, առեալ ընդ քեզ զդատաւորս զմեծամեծս և զարս երեւելիս, որք բնակին յերուսաղէմ, քննել ստուգութեամբ և արձանագրել զվէճսայնն առանց նպատակի և թշնամութեան, եւ առանց հետեւելոյ հաճութեան կամաց. եթէ ստուգեսցի թէ՝ է նորաչէն սեղանն Լատինաց՝ կործանեսջիք զայն։ Եւ եթէ յայնմ լիցի թէ՝ վանք Ս. Յակոբայ լեալ իցէ սեփհական ազգին Վրաց, եւ Հայք բռնութեամբ տիրեալ են նմա, դարձուսջիք զայն առ Վրացիս ըստ սովորութեան իւրեանց, և գրեսջիք հանրագիր օրինօք, եւ վկայեսցեն ի նմա ամենայն արք երեւելիք՝ որք են ի ժողովի ձերում, և առաքեսջիք զայն առ Բարձրագոյն դուռն մեր։ Հրաման տացի դեսպանին չինել և նորոգել զաւերեալ վանս իւրեանց ի վերայ նախնական դրից, առանց առնելոյ նորահնար իրս ինչ։ Արդ՝ մեկնեալ աստի դեսպանին այն-